ՀԱՄԱՑԱՆՑԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույնով սահմանվում են «ՌԵԱԼ ԹԱՅՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության **(այսուհետ նաև՝ ՌԵԱԼ ԹԱՅՄ)** կողմից Բաժանորդին համացանցի հասանելիության և հարակից ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներն ու պայմանները **(այսուհետ նաև՝ Պայմաններ)**:

1.2. Պայմանները հանդիսանում են համացանցի հասանելիության և հարակից ծառայությունների մատուցման՝ ամսական/տարեկան կանխավճարային բաժանորդային պայմանագիր կնքելու համար հրապարակային օֆերտա (առաջարկ):

1.3. Բաժանորդի կողմից սույն օֆերտան ընդունելը (ակցեպտավորելը) իրականացվում է Ծառայությունների ակտիվացման համապատասխան հավելվածը **(այսուհետ նաև՝ Ծառայությունների ակտիվացման հավելված**) ստորագրելու հիման վրա: Պայմանների համաձայն ստորագրված Ծառայությունների ակտիվացման հավելվածը կհանդիսանա Բաժանորդի և «ՌԵԱԼ ԹԱՅՄ» ՍՊ ընկերության միջև կնքված պարտադիր ուժ ունեցող պայմանագիր **(այսուհետ նաև՝ Բաժանորդային Պայմանագիր):**

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

2.1. Ներքոշարադրյալ սահմանումները սույն Պայմաններում ունեն հետևյալ նշանակությունը.

«Հանձնաժողով»՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

«Պայմաններ»՝ «ՌԵԱԼ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի կողմից համացանցի հասանելիության (էլեկտրոնային հաղորդակցության) և հարակից ծառայությունների մատուցման սույն հիմնական պայմաններն են, որը Բաժանորդի հետ Բաժանորդագրության պայմանագիր կնքելու Կատարողի հրապարակային առաջարկն (օֆերտա) է:

«Լիցենզիա»՝ «ՌԵԱԼ ԹԱՅՄ» ՍՊԸ-ին Հանձնաժողովի 2007 թ. մարտի 23-ի թիվ 120Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) համար տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի թիվ 0108 լիցենզիա:

«Կատարող»՝ «ՌԵԱԼ ԹԱՅՄ» ՍՊԸ:

«Կատարողի ցանց (Ցանց)»՝ «ՌԵԱԼ ԹԱՅՄ» ՍՊԸ-ին պատկանող հաղորդման համակարգ, իսկ համապատասխան դեպքերում նաև միացնող–անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս ազդակներ (սիգնալներ) հաղորդել մալուխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ ամրակցված ցանցով և շարժական կապի երկրային ցանցով այնպես, որպեսզի դրանք օգտագործվեն ազդակների հաղորդման համար՝ անկախ հաղորդվող տեղեկատվության տեսակից:

«Ծառայություններ»՝ Կատարողի կողմից մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) և հարակից այլ ծառայությունների՝ որպես մեկ ծառայություն մատուցվող ծառայությունների միասնական փաթեթ.

- Ինտերնետ հասանելիություն
- Ռեալ ինտերնետ հաղորդագրություն (Ռեալ IP)

• Լրացուցիչ սարքերի տրամադրման և ապամոնտաժման ծառայություններ
• ՏՏ ոլորտին հարակից այլ ծառայություններ:
«Զանգերի կենտրոն»՝ +37491195265, +37494195265, +37455195265 հեռախոսահամարներով Կատարողի կողմից մատուցվող Ծառայություններ:
«Պաշտոնական վեբ կայք»՝ Կատարողի պաշտոնական ինտերնետային վեբ կայքը՝ www.realtime.am:
«Բաժանորդ»՝ ցանկացած անձ, ով սույն Պայմաններով սահմանված կարգով կնքել է Բաժանորդագրության պայմանագիր (ակցեպտավորել է սույն հրապարակային առաջարկը/օֆերտան) կամ դիմել է ծառայություններից օգտվելու համար:
«Բաժանորդագրության պայմանագիր»՝ Պայմանների համաձայն Կատարողի և Բաժանորդի միջև կնքված Ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր, հավելված:
«Դիմում»՝ Բաժանորդի կողմից Կատարողին ուղղված Ծառայությունների և այլնի հետ կապված գրավոր դիմում: Դիմումին է հավասարեցվում Զանգերի կենտրոն ներկայացվող հայտը:
«Ծառայությունների ակտիվացման հավելված»՝ Պայմաններին համապատասխան Բաժանորդի կողմից ստորագրված փաստաթուղթ, որի միջոցով Բաժանորդը Ծառայություններից օգտվելու նպատակով Կատարողի հետ կնքում է Բաժանորդագրության պայմանագիր (ակցեպտավորում է Կատարողի սույն հրապարակային առաջարկը (օֆերտան): Ծառայությունների ակտիվացման հավելվածը հանդիսանում է սույն հրապարակային առաջարկ (օֆերտա) հանդիսացող Պայմաններն ամբողջությամբ ընդունելու վերաբերյալ Բաժանորդի գրավոր համաձայնություն:
«Պահանջվող փաստաթղթեր»՝ Բաժանորդագրության պայմանագիր կնքելու համար Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձի կողմից Ծառայությունների ակտիվացման հավելվածի հետ մեկտեղ ներկայացվող փաստաթղթեր:
«Սարք»՝ Կատարողի կողմից Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված սարք՝ իր պատկանելիքներով և մալուխ, որոնց միջոցով Բաժանորդին հնարավորություն է ընձեռվում օգտվել Կատարողի Ծառայություններից:
«Տեխնիկական հնարավորություն»՝ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովելու համար Բաժանորդին՝ Կատարողի հեռահաղորդակցության ենթակառուցվածքներին միանալու հնարավորություն:
«Ցանցի հասանելիության տարածք»՝ աշխարհագրական տարածքը (վայրը), որտեղ Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունները տեխնիկապես հասանելի են:
«Հաշվետու ժամանակաշրջան»՝ ժամանակահատված, որի ընթացքում մատուցվել են էլեկտրոնային հաղորդակցության Ծառայություններ:
«Ամիս»՝ հաշվետու ժամանակաշրջան, որի գործողությունն սկսվում է Ծառայությունների ակտիվացման օրվանից և ավարտվում հաջորդ ամսվա համապատասխան ամսաթվի ժամը 23:59:59-ին և/կամ յուրաքանչյուր ամսվա առաջին օրվա ժամը 00:00:01-ից մինչև տվյալ ամսվա վերջին օրվա ժամը 23:59:59-ը:
«Բաժանորդի տարածք» կամ **«Հասանելիության կետ»**՝ վայր, որտեղ Բաժանորդը ցանկանում է ստանալ Ծառայություններ:
«Բիլինգային համակարգ»՝ հաշվարկների իրականացման ավտոմատացված տեղեկատվական համակարգ, որի միջոցով հաշվառվում են Բաժանորդին մատուցված Ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը և հաշվարկվում Բաժանորդների պարտքերը և ստացված վճարումները:
«Բաժանորդի անձնական գրասենյակ»՝ բիլինգային համակարգում վարվող անալիտիկ հաշիվ, որն

օգտագործվում է Բաժանորդին մատուցվող Ծառայությունների տեսակների, ծավալների, արժեքների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար:

«Բաժանորդի անձնական հաշիվ»՝ Կատարողի կողմից Բաժանորդին տրամադրված հաշիվ, որը նախատեսված է Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման դիմաց Բաժանորդի կողմից վճարումներ կատարելու համար:

«Նույնականացման համար (ID)»՝ տառերի և/կամ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բաժանորդի նույնականացման և Բաժանորդի կողմից իր անձնական հաշիվ մուտք գործելու ու վճարումներ կատարելու համար: Բաժանորդի ID-ին փոփոխման ենթակա չէ:

«Գաղտնաբառ»՝ Բաժանորդի նույնականացման համար կիրառվող տառերի և/կամ թվերի համակցություն:

«Սակագնային պլան/փաթեթ»՝ որոշակի հատկանիշներով օժտված ծառայություն, որն ընտրում է Բաժանորդը և որի անվանումը, առանձնահատկությունները, մատուցման պայմանները, սակագները, մանրամասները և այլ տեղեկությունները ներկայացված և հրապարակված են Պաշտոնական վեբ կայքում:

«Միացման միանվագ գումար»՝ միանվագ վճար, որը կատարվում է Բաժանորդի կողմից Ծառայությունների ակտիվացման/միացման նպատակով: Միացման միանվագ գումարը որևէ պարագայում վերադարձման կամ հաշվանցման ենթակա չէ:

«Ամսական բաժանորդագրման վճար»՝ Ծառայությունների մատուցման դիմաց ամսական վճար, որը սահմանված է Ծառայությունների ակտիվացման հավելվածով:

«Տարեկան բաժանորդագրման վճար»՝ Ծառայությունների մատուցման դիմաց 12 ամսվա համար յուրաքանչյուր ամսվա առաջին օրվա ժամը 00:00:01-ից մինչև տվյալ ամսվա վերջին օրվա ժամը 23:59:59-ը ներառյալ ամսական վճար, որը սահմանված է Ծառայությունների ակտիվացման հավելվածով:

«Տուժանք (տուգանք, տույժ)»՝ տուգանք է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը Բաժանորդը պարտավոր է վճարել Կատարողին պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու, ներառյալ՝ կատարման կետանցի դեպքերում: Տուգանք վճարելու պահանջի դեպքում Կատարողը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել: Միացման միանվագ գումարը որպես տուգանք գանձվում է Բաժանորդից Ծառայությունների ակտիվացման հավելվածով սահմանված կարգով և չափով:

«SMS ծանուցում»՝ Կատարողի կողմից Բաժանորդին ուղարկվող ծանուցում կատարվող աշխատանքների, հնարավոր խափանումների, կապի վերագործարկման, Ամսական բաժանորդագրման վճարի հիշեցման և այլնի մասին:

«Մասնագետի այց»՝ վճարովի ծառայություն, որը Բաժանորդը վճարում է Կատարողի մասնագետին Ծառայությունների հետ չկապված խնդիրները լուծելու համար: Մասնագետի այցի գումարի չափը սահմանվում է Ծառայությունների ակտիվացման հավելվածով:

«Ընդառաջում»՝ Ծառայությունների ժամանակավոր կասեցում, որի դեպքում Բաժանորդից Տարեկան բաժանորդագրման վճարի ամսական պարտավորությունների գումարը չի գանձվում: Կասեցումը չի կարող տևել 6 (վեց) ամսից ավելի: Կասեցման դեպքում Կատարողը կարող է անվճար ապամոնտաժել տեղադրված Սարքը: Այն դեպքում, երբ Սարքը ապամոնտաժվել է ու Բաժանորդը կրկին ցանկանում է օգտվել Ծառայություններից, ապա կամ վճարում է Մասնագետի այցի գումարը, կամ 3 ամսվա կանխավճար, որի դեպքում ազատվում է Մասնագետի այցի գումարը վճարելուց: Ընդ որում, Ծառայություններից կրկին օգտվելու դեպքում Տարեկան

բաժանորդագրության պայմանագիրը երկարաձգվում է կասեցված ժամանակահատվածին համապատասխան:
«Իրական IP տրամադրում»՝ առանց Բաժանորդի համաձայնության, պետական մարմնի գրավոր դիմումի հիման վրա, օրենքով սահմանված կարգով փաստաթղթերի առկայության դեպքում, Կատարողի կողմից Բաժանորդի իրական IP-ով կատարված գործողությունների ցանկի տրամադրում:
«Կողմ»՝ Բաժանորդագրության պայմանագրի կողմերն են առանձին հիշատակման դեպքում:
«Կողմեր»՝ Բաժանորդագրության պայմանագրի կողմերն են համատեղ հիշատակման դեպքում:
«Հայաստանի Հանրապետության օրենսդրություն»՝ նշանակում է քննարկվող փաստի նկատմամբ կիրառելի Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը:

3. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

3.1. Պայմանները Կատարողի՝ մատուցվող Ծառայությունների հրապարակային առաջարկն (օֆերտա) է, որը Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձի կողմից այն ընդունելու (ակցեպտավորելու) պահից Բաժանորդի և Կատարողի միջև կնքված և պարտադիր իրավական ուժ ունեցող պայմանագիրն է (Բաժանորդագրության պայմանագիր):
3.2. Բաժանորդագրության պայմանագիրն ընդունվում (ակցեպտավորվում) է սույն Պայմաններում սահմանված ձևով ու կարգով ստորագրված Ծառայությունների ակտիվացման հավելվածը ստորագրելու փաստով:
3.3. Բաժանորդագրության պայմանագիրը բաղկացած է Պայմաններից, Ծառայությունների ակտիվացման հավելվածից, ինչպես նաև Կատարողի Պաշտոնական վեբ կայքում զետեղված հնարավոր այլ պայմաններից:
3.4 Վերոհիշյալ փաստաթղթերի միջև տարընթերցումների և/կամ հակասությունների առկայության դեպքում համապատասխան փաստաթղթերի դրույթները կիրառվում են հետևյալ գերակայությամբ՝ (1) Պայմաններ, (2) Ծառայությունների ակտիվացման հավելված, (3) Կատարողի Պաշտոնական վեբ կայքում զետեղված Ծառայությունների մատուցման այլ պայմաններ, որոնք նախատեսված չեն սույն Պայմաններում:
3.5. Բաժանորդագրության պայմանագիրը գործում է Ծառայությունների ակտիվացման հավելվածի ստորագրման պահից:
3.6. Բաժանորդագրության պայմանագիրը համարվում է կնքված մեկ ամիս և/կամ մեկ տարի ժամկետով:
Յուրաքանչյուր հաջորդ վճարման փաստով Բաժանորդագրության պայմանագիրը համարվում է երկարաձգված ևս մեկ ամսով: Սույն կարգը գործում է յուրաքանչյուր հաջորդ ամսվա համար:
Բաժանորդագրության պայմանագիրը մեկ տարի ժամկետով կնքված լինելու դեպքում այն երկարաձգվում է ևս մեկ տարի Բաժանորդի կողմից 13-րդ ամսվա վճարումը կատարելու փաստով: Սույն կարգը գործում է յուրաքանչյուր հաջորդ տարվա համար:
3.7. Բաժանորդն իրավունք չունի Կատարողից ստացած Ծառայությունները վերավաճառել կամ այլ կերպ հասանելի դարձնել երրորդ անձանց:
3.8. Բաժանորդը պարտավոր է կատարել Պայմանների, Կատարողի Պաշտոնական վեբ կայքում զետեղված այլ պայմանների պահանջները և հետևել դրանց փոփոխություններին:
3.9 Պայմանագրի կնքման ժամանակ Բաժանորդը պարտավոր է ամբողջությամբ ծանոթանալ, համաձայնվել և պարտավորություն կրել Կատարողի կողմից սահմանված գնացուցակի և պայմանների հետ:

3.10 Պայմանագրով ամրագրված ծառայությունը Կատարողի կողմից ենթակա է մատուցման Բաժանորդի կողմից նշված հասցեում:

4. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն օֆերտան ակցեպտավորելու համար Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձը հեռախոսազանգի միջոցով տեղեկացնում է Կատարողին, ինչի արդյունքում գրանցվում է համապատասխան հայտ: Որպես նախնական տեղեկատվություն, հայտ գրանցելու համար անձը ներկայացնում է իր անուն, ազգանուն, հայրանունը, հեռախոսահամարը, հասցեն:

4.2. 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողի կողմից զննվում է Բաժանորդի տարածքը և, դրական եզրակացության դեպքում, հեռախոսազանգի միջոցով Բաժանորդը տեղեկացվում է Ծառայությունների մատուցման հնարավորության կամ դրա բացակայության մասին:

4.3. Ծառայությունների մատուցման հնարավորության առկայությամբ, Բաժանորդի վերջնական համաձայնության դեպքում, Կատարողը մատուցում է Միացման ծառայությունները և Բաժանորդը ստորագրում է Ծառայությունների ակտիվացման հավելվածը:

4.4. Ծառայությունների ակտիվացման հավելվածին կից Բաժանորդը ներկայացվում է անձը հաստատող հետևյալ փաստաթղթերը.

ՀՀ քաղաքացի հանդիսացող **ֆիզիկական անձը** պարտավոր է ներկայացնել նշյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

•ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ,

•ներկայացուցչի դեպքում՝ լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացի չհանդիսացող (օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, փախստական) ֆիզիկական անձը պարտավոր է ներկայացնել նշյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

• անձը հաստատող փաստաթուղթ,

• ՀՀ տարածքում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ,

• ճամփորդական փաստաթուղթ,

•ներկայացուցչի դեպքում՝ լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

Իրավաբանական անձը պարտավոր է ներկայացնել՝

• պետական գրանցման վկայականի պատճենը,

• հարկ վճարողի հաշվառման համարը (եթե չի նշված պետական գրանցման վկայականում),

• իրավաբանական անձի վավերապայմաններ (հասցե, բանկային տվյալներ, գործող հեռախոսահամար, էլ-փոստի հասցե),

•ներկայացուցչի դեպքում՝ լիազորված անձի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը:

Անհատ ձեռնարկատերը պարտավոր է ներկայացնել՝

• պետական գրանցման վկայականի պատճենը,

•հարկ վճարողի հաշվառման համարը (եթե նշված չէ պետական գրանցման վկայականում),

• անհատ ձեռնարկատիրոջ անձը հաստատող փաստաթուղթը.

•ներկայացուցչի դեպքում՝ լիազորված անձի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը:

4.5.Միացման/ակտիվացման ծառայությունների մատուցման օրվանից սկսած 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդը կատարում է Միացման միանվագ գումարը և Տարեկան/Ամսական բաժանորդագրման վճարը: Միացման միանվագ գումարը կազմում է **9400 (ինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ**, որը ներառում է սարքավորումների մոնտաժման և ապամոնտաժման վճարը, ինչպես նաև բոլոր հարկերը:
4.6.Բաժանորդի կողմից Կատարողին ներկայացված փաստաթղթերով հավաստող տվյալների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին և ներկայացնել գործող տվյալները հավաստող փաստաթղթերը:
4.7.Մատուցված ծառայությունների սակագների արագությունները կարգավորվում են համապատասխան նշված թվի սահմանափակումներով, ինչպես նաև համընդհանուր գիծը բաշխվում է այդ պահին օգտվող Բաժանորդների միջև:
4.8. Անհրաժեշտության դեպքում Կատարողի պահանջով Բաժանորդը պարտավոր է ներկայացնել նաև Կատարողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:
4.9. Կատարողն իրավունք ունի մերժել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը, եթե մերժումը պայմանավորված է Կատարողի տեխնիկական հնարավորությունների բացակայությամբ, երբ Բաժանորդի տարածքը դուրս է Ցանցի հասանելիության տարածքի սահմաններից կամ պահանջում է անհամաչափ ծախսեր, երբ Բաժանորդը Ծառայությունների ակտիվացման հավելվածի հետ մեկտեղ չի ներկայացրել Պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև՝ եթե Ծառայությունների մատուցման ցանկալի հասցեում մեկ այլ Բաժանորդագրության պայմանագրի շրջանակներում արդեն մատուցված Ծառայությունների դիմաց կան չմարված պարտավորություններ, և այդ անձինք ընդհանուր տնտեսական շահ ունեն:
4.10. Պայմանների 4.9 կետում նշված՝ անհամաչափ ծախսերի անհրաժեշտության դեպքում, Բաժանորդի ցանկությամբ, Ծառայությունները կարող են մատուցվել՝ պայմանով, որ Բաժանորդը կփոխհատուցի անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը:
4.11. Կատարողն իրավունք ունի նաև մերժել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը կամ դադարեցնել Ծառայությունների մատուցումը, եթե Բաժանորդն անհարգալից, կոպիտ վերաբերմունք է ցուցաբերում Կատարողի աշխատակիցների նկատմամբ, անձնական կամ հեռախոսակապի միջոցով շփման ժամանակ թույլ է տալիս վիրավորական արտահայտություններ, ոչ կոռեկտ պահվածք, անհարկի ծանրաբեռնում է սույն Պայմաններում նշված հեռախոսահամարները և դրսևորում այլ ոչ իրավաչափ վարքագիծ:

5. ՍԱՐՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Համացանցի հասանելության Ծառայությունների մատուցումը կատարվում է Բաժանորդի տարածքում Կատարողի տեղադրած և վերջինիս սեփականության իրավունքով պատկանող Սարքի միջոցով, եթե Սարքը Բաժանորդը ձեռք չի բերել Կատարողից՝ համապատասխան արժեքը վճարելով վերջինիս:
5.2. Սարքը Բաժանորդին է տրամադրվում օգտագործման իրավունքով: Բաժանորդն իրավունք չունի Սարքը կամ դրա նկատմամբ օգտագործման իրավունքը փոխանցել կամ այլ կերպ հասանելի դարձնել երրորդ անձանց: Բաժանորդը պարտավոր է Սարքն օգտագործել միայն Պայմաններով և Կատարողի կողմից հրապարակված այլ փաստաթղթերով սահմանված նպատակներին ու կանոններին համապատասխան: Բաժանորդին Սարքի հանձնումը հավաստվում է

Ծառայությունների ակտիվացման հավելվածի ստորագրմամբ՝ բացառությամբ, եթե Սարքը Բաժանորդը ձեռք չի բերել Կատարողից՝ համապատասխան արժեքը վճարելով վերջինիս:
5.3. Սույն օֆերտան ակցեպտավորելով Բաժանորդը տալիս է իր անվերապահ ու անհետկանչելի համաձայնությունն առ այն, որ Բաժանորդագրության պայմանագրի գործողության ընթացքում չի խոչընդոտի Կատարողի տեղադրած Սարքերի (այդ թվում՝ և Բաժանորդի տարածքում) միջոցով Կատարողի այլ Բաժանորդներին համացանցի հասանելության և հարակից ծառայությունների մատուցմանը: Բաժանորդի կողմից սույն կետի պահանջը խախտելը հիմք է Բաժանորդագրության պայմանագրի միակողմանի լուծման համար:
5.4. Բաժանորդը պարտավոր է ապահովել Սարքի պահպանությունը, Սարքն օգտագործել Կատարողի, արտադրողի կողմից և այլ կերպ Սարքին ներկայացվող պահանջներին ու շահագործման կանոններին համապատասխան:
5.5. Բաժանորդը պատասխանատվություն է կրում Սարքին պատճառած այն վնասի կամ դրա կորստի համար, որն առաջացել է Բաժանորդի մեղքով կամ նրա կողմից Սարքի պահպանության համար բավարար միջոցներ չձեռնարկելու արդյունքում:
5.6. Բաժանորդը չպետք է իրեն տրամադրված Սարքն օգտագործի անհամատեղելի այլ սարքավորումների հետ կամ որևէ այլ եղանակով, որը կարող է ազդել Կատարողի ցանցի և/կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա:
5.7. Սարքի տեղադրումը, կարգաբերումը և տեղափոխումն (մատուցվող Ծառայությունների հասցեափոխության դեպքում) իրականացվում է միայն Կատարողի մասնագետների կողմից:
5.8. Բաժանորդը պարտավոր է Սարքն օգտագործել միայն այն վայրում, որտեղ այն տեղադրվել և կարգաբերվել է Կատարողի մասնագետների կողմից՝ միայն Կատարողի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով:
5.9. Բաժանորդը պարտավոր է Կատարողին վճարել Միացման միանվագ գումարը՝ **9400 (ինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամը** որպես Տուգանք տարեկան բաժանորդագրության ժամկետից շուտ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում:
5.10. Բաժանորդը պարտավորվում է Բաժանորդագրության պայմանագրի՝ ցանկացած հիմքով լուծումից (այդ թվում՝ փաստացի դադարումից) 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Սարքը վերադարձնել սարքին և պատշաճ վիճակում՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը: Ընդ որում, Կատարողի կողմից Բաժանորդագրության պայմանագրի միակողմանի լուծման դեպքում, Սարքը վերջինիս կողմից կարող է հետ վերցվել առանց Բաժանորդի համաձայնությունը ստանալու: Ամեն դեպքում Բաժանորդը պարտավորվում է Կատարողի մասնագետների համար հնարավորություն ստեղծել Սարքը, Սարքի պատկանելիքներն ապամոնտաժելու համար:
5.11. Կատարողը պատասխանատու չէ իր կողմից տրամադրված Սարքի միջոցով Բաժանորդին պատճառված վնասի համար:
5.12. Սարքի որևէ կերպ խափանման, վնասվածքի, կորստի կամ գողության դեպքում Բաժանորդը պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին:
5.13.Կատարողը պարտավորվում է Բաժանորդի կողմից Սարքի կորստի կամ գողության մասին պատշաճ ծանուցվելու դեպքում՝ Բաժանորդի կողմից Ծառայությունների կասեցման պահանջ ներկայացնելու պահից, կասեցնել Ծառայությունների մատուցումը:
5.14. Սարքի խափանման, վնասվածքի կամ կորստի դեպքում Բաժանորդին այլ Սարքի տրամադրումը հնարավոր է միայն Բաժանորդի կողմից հին Սարքի համար փոխհատուցում վճարելուց հետո:

5.15. Կատարողը պարտավորվում է Բաժանորդին տրամադրված Սարքն անվճար փոխարինել այլ Սարքով, եթե Կատարողի կողմից հայտնաբերվել են հին Սարքի արտադրական թերություններ:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կատարողը մատուցում է Հայաստանի Հանրապետությունում հանրային էլեկտրոնային հաղորդակցության, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) և հարակից այլ ծառայություններ:

6.2. Ծառայությունների նկարագրությունը, Ծառայությունների նկատմամբ կիրառելի սակագները, պայմանները և կանոնները սահմանվում են Կատարողի կողմից: Կատարողը կարող է որպես մեկ ծառայություն մատուցել ծառայությունների միասնական փաթեթ:

6.3. Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների, Սակագնային պլանների/փաթեթների առանձնահատկությունները, բնույթը, տեսակը, նկարագրությունը, դրանց նկատմամբ կիրառվող սակագները, զեղչային ու այլ առաջարկները և այլ տեղեկությունների նկարագրությունը զետեղվում են Կատարողի Պաշտոնական վեբ կայքում:

6.4. Ծառայությունները մատուցվում են Կատարողի ցանցի առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում:

6.5. Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունները հետևյալն են՝

6.5.1 ապահովել Բաժանորդին պատկանող Հասանելիության կետի կամ այլ ցանցային սարքի միացումը համացանցին Կատարողի հանրային էլեկտրոնային ցանցի միջոցով:

6.5.2 Ծառայությունները մատուցել տարվա բոլոր օրերին, շուրջօրյա, առանց ընդհատումների:

6.6.Կատարողը պարտավորվում է ձեռնարկել իրենից կախված բոլոր անհրաժեշտ, համաչափ և ողջամիտ միջոցները Ծառայությունների անխափան մատուցումն ապահովելու նպատակով: Այդուամենայնիվ, սույնով Բաժանորդն ընդունում է, որ Ծառայությունների մատուցումը և դրանց որակը կախված է ոչ միայն Կատարողից, այլև Կատարողի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, որոնց համար Կատարողը պատասխանատվություն չի կրում: Նման հանգամանքներ են մասնավորապես, սակայն չսահմանափակվելով՝ Ծառայությունների ստացման հնարավորությունը, Բաժանորդային սարքավորման որակը և տեխնիկական առանձնահատկությունները, ռադիոալիքների տարածմանը և ռադիոսարքավորումների բնականոն շահագործմանը խոչընդոտող հանգամանքները, այլ օպերատորների ցանցերի անկանոն աշխատանքը, տեղանքի առանձնահատկությունները և օդերևութաբանական և այլ եղանակային պայմանները:

6.7. Մատուցվող Ծառայությունների որակը և ծավալը կարող է սահմանափակվել Կատարողի կողմից՝ սույն Պայմանների և Կատարողի կողմից սահմանված այլ կանոնների համաձայն:

6.8. Ծառայությունների մատուցումը կարող է ընդհատվել, սահմանափակվել կամ որակը վատթարանալ վերանորոգման, տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման, ինչպես նաև տեխնիկական խափանումների դեպքում:

6.9. Կատարողը պատասխանատվություն չի կրում սպամի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար:

6.10. Կատարողը որևէ վերահսկողություն չի իրականացնում և պատասխանատվություն չի կրում իր ցանցով տեղափոխվող ու ստացվող տեղեկատվության, դրա բովանդակության համար:

6.11. Բաժանորդն ընդունում է Կատարողի կողմից Ծառայությունների կասեցումը կամ դադարեցումը, նաև առանց նախազգուշացման, ցանցի խափանման և/կամ երրորդ անձանց կողմից Կատարողին մատուցվող ծառայության անսպասելի դադարեցման դեպքում:

6.12. Ցանցի վերանորոգման, ընդլայնման, ամրապնդման և/կամ պրոֆիլակտիկ աշխատանքների կատարմամբ պայմանավորված՝ Կատարողը, նախապես Պաշտոնական վեբ կայքում համապատասխան տեղեկություն զետեղելուց և/կամ SMS ծանուցում ուղարկելուց և/կամ իր կողմից ընդունելի այլ ձևով Բաժանորդին ծանուցելուց հետո, իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել Ծառայությունների մատուցումը:
6.13. Ցանկացած դեպքում Ծառայությունների մատուցման թերությունները վերացնելու նպատակով Բաժանորդը պարտավոր է թույլ տալ Կատարողի ներկայացուցչին աշխատել Ցանցի, Սարքի, այլ սարքավորումների վրա, սահմանաբաժան կետի վրա, Ցանցին, Սարքին, ինտերնետային ցանցին միացված լարերի և վերջնակետային սարքավորումների վրա:
6.14. Եթե թերություններն առաջացել են Բաժանորդի մեղքով, ապա Ծառայությունների մատուցման թերությունների վերացման ծախսերը կրում է Բաժանորդը:
6.15. Մեկ ամսվա ընթացքում գումարային քսանչորս ժամը գերազանցող՝ Ծառայությունների խափանման դեպքում, Կատարողը պարտավոր է խափանմանը համապատասխան ժամանակահատվածի չափով Ծառայությունից օգտվելու հնարավորություն տալ Բաժանորդին՝ պայմանով, որ նշված խափանումների մասին Բաժանորդն անհապաղ տեղեկացրել է Կատարողին:
6.16. Կատարողը պատասխանատվություն չի կրում Ծառայությունները չմատակարարելու համար այն դեպքում, եթե մատակարարումը դադարել է ոչ իր մեղքով:
6.17. Բաժանորդի տրամադրած հեռախոսահամարին SMS ծանուցում կամ էլեկտրոնային հասցեին Կատարողի կողմից նամակ ուղարկելու, կամ Կատարողի պաշտոնական վեբ կայքի միջոցով, կամ որևէ այլ գրավոր եղանակով վերջինիս պարբերաբար համապատասխան փոփոխությունների և այլն նորությունների/իրազեկումների վերաբերյալ տեղեկատվություն ուղարկելու/զետեղելու պահից, Բաժանորդը համարվում է պատշաճ ծանուցված և տեղեկացված՝ անկախ այն հանգամանքից՝ Բաժանորդը ծանոթացել է, թե՝ ոչ:
6.18. Բաժանորդի տրամադրած հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փոստի հասցեի, անձնական տվյալների ցանկացած փոփոխության դեպքում, վերջինս պարտավորվում է այդ մասին անհապաղ որևէ կերպ տեղեկացնել Կատարողին, հակառակ դեպքում Բաժանորդը համարվում է պատշաճ ծանուցված:
6.19. Բաժանորդի մահվան, դատարանի վճռով մահացած հայտարարվելու, անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչվելու դեպքում, սույն Բաժանորդագրության պայմանագրով ամրագրված պարտավորությունները փոխանցվում են նրա իրավահաջորդ/ներին՝ մինչև Բաժանորդագրության պայմանագրի լուծումը:
6.20. Կատարողը պարտավոր չէ Բաժանորդագրային պայմանագրի գործողության որևէ հիմքով դադարումից հետո 6 (վեց) ամսից ավելի ժամկետով պահպանել Բաժանորդի տվյալների, մատուցած ծառայությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. **Կատարողն իրավունք ունի՝**

7.1.1. ինքնուրույն սահմանել և ժամանակ առ ժամանակ փոփոխել սույն Պայմանները, Ծառայությունների ցանկը, Սակագնային պլանները/փաթեթները, դրանց մատուցման պայմանները, կանոնները և սակագները,

7.1.2. տեխնիկական անհրաժեշտությունից կախված կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ սահմանափակումներ,

7.1.3. Բաժանորդին, սույն պայմանագրով ամրագրված Ծառայություններից զատ, հավելյալ լրացուցիչ Ծառայություններ մատուցելու դեպքում, վերջինից առանձին վճար պահանջել՝ նախապես ծանուցելու պայմանով,

7.1.4. առանց որևէ կերպ ծանուցման, միակողմանիորեն կասեցնել Ծառայությունների մատուցումը և դադարեցնել Բաժանորդագրության պայմանագիրը, եթե Բաժանորդը չի կատարել Ծառայությունների մատուցման հաջորդ ամսվա կանխավճարը և/կամ դրա հիմքով Ծառայությունների մատուցման կասեցումից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում չի վերսկսել վճարումները կամ խախտել է Բաժանորդագրության պայմանագրի այլ դրույթները: Ընդ որում, Ծառայությունների կասեցումը և/կամ Սարքի ապամոնտաժումը Բաժանորդին չի ազատում Կատարողի նկատմամբ դրամական և այլ պարտավորությունների կատարումից:

7.1.5. Բաժանորդի կողմից Բաժանորդագրության պայմանագրի պայմանների ու դրույթների խախտման դեպքում միակողմանիորեն հրաժարվել Բաժանորդագրության պայմանագրից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը,

7.1.6. Բաժանորդի կողմից Բաժանորդագրության պայմանագրի խախտման դեպքում կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

7.2. **Կատարողը պարտավորվում է՝**

7.2.1. տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել Ծառայություններից օգտվելու Բաժանորդի հնարավորությունը և պատշաճ որակը,

7.2.2. Ծառայություններից օգտվելու նպատակով Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրել Սարք և կատարել համապատասխան ցանցային միացումներ,

7.2.3. Բաժանորդին տեղեկատվություն տրամադրել Կատարողի ցանցի հասանելիության, Տեխնիկական հնարավորությունների, Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային պլանով նախատեսված Ծառայությունների առանձնահատկությունների, հատկանիշների, Ծառայությունների մատուցման պայմանների, մատուցված Ծառայությունների ծավալի և անձնական հաշվի մնացորդի վերաբերյալ: Այլ լրացուցիչ տեղեկությունների տրամադրման դիմաց Կատարողը կարող է ծառայության առանձին վճար գանձել:

7.2.4.Կատարել պայմանագրով նախատեսված ծառայություններն որակով և սահմանված ժամկետում:

7.3. **Բաժանորդն իրավունք ունի՝**

7.3.1. տեխնիկական հնարավորությունների սահմաններում ստանալ Ծառայությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալ առաջարկվող Ծառայությունների, կիրառվող Սակագնային պլանների/փաթեթների, մատուցված Ծառայությունների տեսակի, ծավալի, արժեքի, գանձված գումարների և անձնական հաշվի ընթացիկ մնացորդի մասին,

7.3.2. ստանալ իրեն մատուցված Ծառայությունների վերծանումները, ինչի համար Կատարողը կարող է ծառայության առանձին վճար գանձել,

7.3.3. փոփոխել Ծառայության արագությունը: Ծառայության արագության փոփոխումը կատարվում է առավելագույնը փոփոխված արագության սակագնով վճարում կատարելուն հաջորդող աշխատանքային օրը,

7.3.4. Ծառայությունների մատուցման կասեցման կամ դադարեցման դեպքում վերաակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել միայն Կատարողի նկատմամբ ունեցած վճարային պարտքը, տույժերը, եթե այդպիսիք հաշվարկվել են, վերաակտիվացման համար գանձվող վճարը և Կատարողի կողմից կատարած աշխատանքների դիմաց վճարները և այլ փաստացի կատարված ծախսերը Բաժանորդի կողմից վճարվելու դեպքում: Եթե Բաժանորդը դրսևորում է

կամահայտնություն կասեցենել պայամանագիրը անորոշ ժամկետով, ապա պայմանագիրը վերսկսելու դեպքում վճարում է կամ Մասնագետի այցի գումարը կամ 3 ամսվա կանխավճար:

7.3.5. տեղեկացնելով Կատարողին՝ միակողմանիորեն վաղաժամկետ հրաժարվել Բաժանորդագրության պայմանագրից՝ վճարելով մինչև վերջինիս լուծման օրն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց, ինչպես նաև Բաժանորդագրության պայմանագրի միակողմանի վաղաժամկետ լուծման համար Կատարողի կողմից նախատեսված այլ վճարումները (տուժանքները, տուգանքները և այլն), եթե այդպիսիք առկա են: Պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.4. **Բաժանորդը պարտավորվում է՝**

7.4.1. կատարել Կատարողի կողմից սահմանված ու հրապարակված Պայմանների, կանոնների պահանջները և հետևել դրանց ընթացքին, փոփոխություններին,

7.4.2. Կատարողի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել Ծառայությունների համար, իսկ Կատարողի կողմից նախատեսված դեպքերում, կատարել երաշխիքային դեպոզիտի վճարում կամ այլ վճարներ,

7.4.3. Ծառայություններից օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Բաժանորդագրության պայմանագրին և Կատարողի կողմից սահմանված այլ կանոններին ու պահանջներին համապատասխան՝ չխախտելով երրորդ անձանց իրավունքները,

7.4.4. Բաժանորդագրության պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները չփոխանցել երրորդ անձանց,

7.4.5. զերծ մնալ Ծառայությունների այնպիսի օգտագործումից, որի արդյունքում կարող են խախտվել Կատարողի կամ այլ անձանց իրավունքները, չօգտագործել մատուցվող Ծառայություններն օրենքին և Բաժանորդագրության պայմանագրին հակասող նպատակներով, ինչպես նաև՝ այլ անձանց համանման ծառայությունների մատուցման համար, չվերավաճառել Ծառայությունները կամ տրամադրել այլ անձանց որևէ իրավունքով (սա հիմք է Կատարողի կողմից Բաժանորդագրության պայմանագրի միակողմանի վաղաժամկետ լուծման և սահմանված տուժանքի գանձման համար),

7.4.6. չօգտագործել Սարքն այլ սարքերի հետ, որոնք նախատեսված չեն նման կերպ օգտագործման համար կամ օգտագործել Սարքը որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Սարքին, Ցանցին կամ որևէ ձևով ազդել Սարքի և/կամ Ցանցի գործառնությունների վրա,

7.4.7. Կատարողի կողմից տրամադրված Սարքը պահպանել պատշաճ և սարքին վիճակում, զերծ մնալ Սարքը ոչ պատշաճ օգտագործելուց,

7.4.8. առանց Կատարողի թույլտվության Սարքը չտեղափոխել և այն օգտագործել միայն այն տարածքում, որտեղ վերջինս տեղադրվել և կարգաբերվել է Կատարողի մասնագետների կողմից,

7.4.9. ապահովել Ծառայությունների ստացման համար անհրաժեշտ իրենից կախված բոլոր միջոցները և որևէ կերպ չվիճարկել իր թերացումներով պայմանավորված Ծառայությունների տատանումները կամ ընդհատումները, մասնավորապես, Կատարողը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կողմից Կատարողի տրամադրված սարքավորումների տեխնիկական շահագործման պայմանների խախտման, հոսանքի ոչ անխափան մատակարարման, սարքավորումների չմիացման, անջատված լինելու, հոսանքի տատանումներից առաջացած ցանկացած խնդրի ծագման համար և այլն:

7.4.10. Չթույլատրել համակարգը շահագործել ոչ մասնագետի կողմից:

7.4.11. Կատարողին անհրաժեշտության դեպքում տրամադրել սպասարկվող տարածքում մուտքի հնարավորություն և տեղ Կատարողի սարքավորումների տեղադրման և սպասարկման համար:
7.4.12. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ապահովել Կատարողի սարքավորումները էլեկտրաէներգիայի անխափան մատակարարմամբ (220Վ հզորությամբ) և տարածքում Կատարողի սարքավորումների և մալուխային համակարգի անվտանգությունը: Բաժանորդը պարտավորվում է պայմանագրի ողջ գործողության ընթացքում անհրաժեշտ համաձայնության գալ գծի/գծերի տեղադրման հետ՝ կապված տարածքի սեփականատերերի, այլ տարածքի համասեփականատերերի հետ, որոնց տարածքում տեղադրվելու են համապատասխան գծերն ու կապի սարքավորումները:
7.4.13. Կատարվող աշխատանքի չափագրման գծագրի համաձայն /ինչպես նաև միացման գծագրի/ նշել գծագրում և Կատարողի ներկայացուցիչ/ներին աշխատանքների իրականացման ընթացքում ցույց տալ այլ տեղանքներ/վայրեր, որտեղ անցնում են բաց/փակ էլեկտրալարեր, ջրառուներ, ջրատար և գազատար խողովակներ, ինժեներական ենթակառուցվածքներ, այդ թվում փակ պատեր/ կոնստրուկցիաներ, տարածքի այլ տարրեր, ինչպես նաև շենքեր, որտեղ տեղակայված է Բաժանորդի տարածքը, որը նախատեսված է որպես օգտագործման տարածք և շինություն:

8. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

8.1. Ծառայությունների տեսակի, արժեքի և բնութագրի վերաբերյալ տեղեկությունները զետեղված են Կատարողի Պաշտոնական վեբ կայքում՝ www.realtime.am: *(Տե՛ս նաև Պայմանների Ամսական բաժանորդագրման վճար և Տարեկան բաժանորդագրման վճար սահմանումները):*
8.2. Ծառայությունների նկատմամբ կիրառվում են Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային պլանի/փաթեթի համար Կատարողի կողմից սահմանված սակագները:
8.3. Ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են կանխավճարային եղանակով, ինչպես նաև կարող է պահանջվել երաշխիքային դեպոզիտ կամ այլ ապահովություն:
8.4. Առաջին ամսվա վճարումը Բաժանորդը կատարում է Միացման/ակտիվացման ծառայությունների մատուցման օրվանից սկսած 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
8.5. Յուրաքանչյուր հաջորդ տարեկան Բաժանորդագրության պայմանագրի գործողությունը շարունակելու ցանկության դեպքում Բաժանորդը պարտավոր է կատարել կանխավճարը ամսական կտրվածքով: Ընդ որում, Բաժանորդը պարտավոր է ընտրել վճարման այնպիսի եղանակ (օրինակ՝ վճարային տերմինալի միջոցով), որ իր կողմից կատարված կանխավճարները Կատարողի հաշվին մուտքագրվեն մինչև ընթացիկ ամսվա վերջին օրը, ժամը 23:59:59-ը: Իսկ ամսական Բաժանորդագրության պայմանագրի գործողությունը շարունակելու ցանկության դեպքում Բաժանորդը պարտավոր է կատարել կանխավճարը մինչև Պայմանագիրը կնքելուն հաջորդող ամսվա համապատասխան ամսաթվի (օրվա) ժամը 23:59:59-ը: Եթե սահմանված ժամկետում Կատարողի հաշվին չի արտացոլվում կանխավճարը, ապա Կատարողն իրավասու է առանց ծանուցման դադարեցնելու Ծառայությունների մատուցումը: Նման դեպքերում, որպես կանոն, Կատարողը Ծառայությունների մատուցումը դադարեցնում է վճարման համար սահմանված օրվան հաջորդող օրվա 10:00:00-ին, որը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել Կատարողի կողմից Բաժանորդագրության պայմանագրի գործողությունը շարունակելու միտում, այլ կատարվում է բացառապես Կատարողի հայեցողական իրավունքների շրջանակում՝ որպես բարի կամքի դրսևորում:

8.6. Կանխավճարային եղանակով Ծառայությունների դիմաց վճարելու դեպքում, եթե այլ բան սահմանված չէ, Կատարողի կողմից Ծառայությունները մատուցվում են Բաժանորդի անձնական հաշվում առկա միջոցների և Կատարողի կողմից սահմանված ժամկետի սահմաններում:
8.7. Կանխավճարային եղանակով Ծառայությունների դիմաց վճարելու դեպքում մատուցված Ծառայություններին համապատասխանող գումարներն ուղղակիորեն նվազեցվում են Անձնական հաշվի մնացորդից:
8.8. Բաժանորդը պարտավոր է ինքնուրույն ճշտել վճարման ենթակա գումարը և կատարել իր ամսական վճարային պարտավորությունները:
8.9. Վճարումները կատարվում են Կատարողի «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում սպասարկվող 2050022059901001 հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու, նաև Հայփոստի մասնաճյուղերում՝ նշելով պայմանագրի համարը, առկայության դեպքում, վճարային տերմինալների միջոցով:
8.10. Կատարողը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանած կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:
8.11. Տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ մատուցված որոշ Ծառայությունների համար Բաժանորդից գանձվող գումարները կարող են անձնական հաշվում արտացոլվել ուշացումով:
8.12. Կատարողն իրավունք ունի Բաժանորդի կողմից վճարված երաշխիքային դեպոզիտի գումարն օգտագործել Բաժանորդի ժամկետանց պարտքերը մարելու նպատակով:
8.13. Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ համարվում է Բաժանորդի կողմից վճարման համար պատշաճ կերպով լիազորված և այդ լիազորության իրականացման նպատակով վերջինի անունից և համար գործող:
8.14. Բաժանորդի կողմից կամ անունից իր մեղքով ID հաշվին առցանց էլեկտրոնային վճարային համակարգերի միջոցով կատարված սխալ մուտքագրումը Բաժանորդի կողմից Զանգերի կենտրոն զանգահարելու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետներում ենթակա է շտկման, իսկ Կատարողը պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով Բաժանորդի կրած վնասների համար:
8.15. Կատարողը կարող է Բաժանորդից լրացուցիչ վճար գանձել Ծառայությունները վերականգնելու կամ այլ լրացուցիչ ծառայություններ մատուցելու համար:

9. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1. Կատարողն իրավունք ունի, առանց Բաժանորդին նախապես ծանուցելու, միակողմանիորեն կասեցնել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները, ինչպես նաև ապամոնտաժել իր մալուխներն ու Սարքը, եթե Բաժանորդը ժամանակին չի կատարում Ծառայությունների դիմաց վճարումը: Կասեցված Ծառայությունները վերաակտիվացնելու կամ ապամոնտաժված մալուխներն ու Սարքը կրկին տեղադրելու և Կատարողի ցանցին վերամիացնելու համար Կատարողն իրավասու է Բաժանորդից լրացուցիչ վճար գանձել: Ամեն դեպքում Ծառայությունների մատուցման կասեցումը կամ դադարեցումը և/կամ Սարքի, մալուխի ապամոնտաժումը Բաժանորդին չի ազատում իր դրամական պարտավորությունը և տուժանքը (եթե առկա է) Կատարողին վճարելու պարտավորությունից:
9.2. Կատարողն իրավունք ունի կասեցնել Ծառայությունների մատուցումը նաև այն դեպքերում, երբ՝

9.2.1. Բաժանորդը Կատարողի ցանցին միացրել է այնպիսի վերջնակետային սարքավորումներ, որոնք համատեղելի չեն կամ միջամտում են Կատարողի ցանցի աշխատանքին կամ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվելու ուրիշների հնարավորությանը,
9.2.2. Սահմանափակումը կամ կասեցումն անհրաժեշտ է սարքավորումների կամ Ցանցի, գծի ենթակառուցվածքների տեղադրման, վերանորոգման, փոխարինման կամ պահպանման համար,
9.2.3. Բաժանորդը խախտում է Պայմանները,
9.2.4. Կատարողը հայտնաբերում է, որ Բաժանորդը Ծառայությունների համար դիմելիս սխալ կամ թերի տվյալներ է ներկայացրել:
9.3. Բաժանորդի կողմից իր Ամսական կամ Տարեկան բաժանորդագրման վճարային պարտավորության չկատարման կամ մասնակի կատարման հետևանքով Ծառայությունների կասեցման պարագայում կասեցվում են Բաժանորդի անձնական գրասենյակում հաշվառվող բոլոր Ծառայությունները:
9.4. Կատարողը իրավունք ունի առանց որևէ կերպ ծանուցման, միակողմանիորեն կասեցնել Ծառայությունների մատուցումը և լուծել Բաժանորդագրության պայմանագիրը, եթե Բաժանորդը չի կատարել Ծառայությունների մատուցման հաջորդ ամսվա կանխավճարը և/կամ դրա հիմքով Ծառայությունների մատուցման կասեցումից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում չի վերսկսել վճարումները կամ խախտել է Բաժանորդագրության պայմանագրի այլ դրույթներ:

10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Սույնով Բաժանորդը տալիս է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը անձնական տվյալների մշակումը Կատարողի կողմից իրականացնելու համար, ինչպես նաև Բաժանորդի՝ առանց վերջինիս ծանուցման, անձնական տվյալների փոխանցումը՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս և Բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման դեպքում իրավունք չունի վնասների փոխհատուցում պահանջել:
10.2. Անձնական տվյալների մշակման իրավասություն վերապահվում է նաև՝
10.2.1. պարտապանների կողմից իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ անձնական տվյալների մշակման, պահպանման և տեղեկատվության տրամադրում իրականացնող երրորդ անձանց,
10.2.2. Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից կուտակած պարտքը պահանջելու կամ դատական կարգով բռնագանձելու իրավունքը ստացած երրորդ անձանց,
10.2.3. իր մատակարարներին և ծառայություն մատուցողներին՝ Ծառայության մատուցման կամ իր գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնելու համար,
10.2.4. վարկային պատմություն հավաքագրելու կամ վարկունակության գնահատում իրականացնելու համար լիազորված երրորդ անձանց,
10.2.5. իր մասնակիցներերին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին, դուստր և կախյալ ընկերություններին, գործընկերներին:
10.3. Անձնական տվյալների մշակումը Բաժանորդի անձնական տվյալների օգտագործումն է որոշակի միջոցառումների, գովազդների և գործողությունների իրականացման վերաբերյալ իրազեկմամբ՝ կապված անձնական տվյալների հավաքման, համակարգման, մուտքագրման, վերափոխման, փոխանցման, պահպանման, ուղղման, ուղեփակման, թարմացման, փոփոխման, օգտագործման, տարածման, ոչնչացման, այդ թվում՝ ապաանհատականացման և բլոկավորման հետ, Բաժանորդի տվյալների օգտագործումը Բաժանորդին հաշիվ ներկայացնելիս, ինչպես նաև

Բաժանորդի տվյալների օգտագործումը՝ կապված նմանատիպ այլ տեղեկատվության տրամադրման հետ:
10.4. Ծառայությունների որակի բարձրացման, անվտանգության նկատառումներից ելնելով, Կատարողի և Բաժանորդի Զանգերի կենտրոնի աշխատակիցների հետ խոսակցությունները կարող են ձայնագրվել: Հայտի համար Կատարողին զանգահարելու պահից Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը ձայնագրման վերաբերյալ և ընդունում է, որ այդ ձայնագրություններն ապացույցի ուժ ունեն: Հեռախոսազրույցների ձայնագրումը, դրանց պահպանումն ու արխիվացումը կատարվում են տեխնիկական հնարավորությունների և Կատարողի կողմից որոշվող նպատակահարմարության հիման վրա:
10.5. Պայմաններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Բաժանորդի անձնական տվյալների բացահայտման դեպքում, Բաժանորդն իրավունք չունի Կատարողից որևէ վնասի փոխհատուցում պահանջել:

11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Պայմաններով, Ծառայությունների ակտիվացման հավելվածով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
11.2. Կատարողի պատասխանատվությունը սահմանափակվում է Բաժանորդի կրած իրական վնասով՝ հաշվանցելով Բաժանորդի կողմից փաստացի օգտվելու անհնարինության ժամկետին համապատասխան փոխհատուցված Ծառայությունները:
11.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Կատարողի ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ վնասի համար:
11.4. Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված Սարքի, մալուխների, ինչպես նաև Սարքի տեղադրման/գործարկման, շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վնասման կամ կորստի դեպքում Բաժանորդը պատասխանատվություն է կրում համապատասխանաբար վնասի կամ կորստի չափով:
11.5. Սարքի տրամադրումը բաժանորդագրումից հետո տրամադրված Սարքի կորստի, հափշտակության կամ վնասման դեպքում հնարավոր է միայն Բաժանորդի կողմից Սարքի դիմաց արժեքի փոխհատուցման դեպքում:
11.6. Կատարողը պարտավորվում է Բաժանորդին տրամադրված արտադրական թերություն ունեցող Սարքն անվճար փոխարինել այլ Սարքով:
11.7. Կատարողն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել իր բոլոր այն վնասները, որոնք Կատարողը կրել է Բաժանորդի կողմից Պայմանները խախտելու արդյունքում:
11.8. Մինչև Բաժանորդագրության պայմանագրով ամրագրված ժամկետի ավարտը Կատարողի Ծառայություններից հրաժարվելու դեպքում, Բաժանորդը պարտավորվում է Կատարողին վճարել նախորդ ժամանակահատվածում վերջինիս կողմից մատուցած ծառայության արժեքը և հնարավոր այլ վճարները:
11.9. 11.8.-րդ կետի դրույթը կիրառելի է նաև այն դեպքում, երբ Բաժանորդը ցանկանում է Պայմանագրի գործողության ժամկետում փոխել իր սակագնային պլանը:
11.10. Կատարողը պատասխանատվություն չի կրում՝
• դժբախտ պատահարի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող ծառայությունների խափանման կամ

դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի ծառայությունների, Սակագնային պլանների/փաթեթների մեջ կատարված փոփոխությունների համար,

• Բաժանորդին պատկանող համակարգչի/ների կամ այլ սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայությունների անպատշաճ մատուցման կամ ընդհատման համար,

• Ծառայության մատուցման ռեժիմի խախտման այն դեպքերի համար, որոնք Բաժանորդի կամ երրորդ անձանց գործողությունների հետևանք են, այդ թվում՝ Կատարողի հետ համագործակցող երրորդ անձանց կողմից Կատարողին մատուցվող ծառայությունների անսպասելի դադարեցման դեպքերում,

• աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, Ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 24 (քսանչորս) ժամը,

• սպամի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար,

•Էլեկտրաէներգիայի անջատման, էլեկտրական ցանցի սնուցման գերազանցման կամ այլ խախտումների հետևանքով առաջացած Բաժանորդի համակարգի անսարքությունների համար:

11.11. Կատարողը ոչ մի վերահսկողություն չի իրականացնում իր Ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված և/կամ ուղարկված տեղեկատվության և բովանդակության ճշտության ու օրինականության համար: Կատարողի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկատվություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ:

11.12. Կատարողը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

11.13. Կատարողը պատասխանատվություն չի կրում իր կողմից Բաժանորդին մատուցվող Ծառայությունները երրորդ անձի կողմից ցանկացած կերպ օգտագործելու համար:

11.14. Բաժանորդագրության պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները առանց Կատարողի համաձայնության երրորդ անձանց փոխանցելու, Կատարողից ստացած Ծառայությունները (ներառյալ՝ Սարքը) վերավաճառելու կամ այլ կերպ երրորդ անձանց հասանելի դարձնելու կամ սույնում սահմանվածից այլ նպատակներով օգտագործելու յուրաքանչյուր դեպքի համար Բաժանորդը, Կատարողի պահանջով, պարտավոր է վճարել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ տուգանք:

12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

12.1. Պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, այլ բնական աղետները, եղանակային վատթար պայմանները՝ մասնավորապես, սակայն չսահմանափակվելով՝ քամին, ամպրոպը, կայծակը, կարկուտը, հեղեղը, սողանքը, և այլն, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Ծառայությունների մատուցման հետ կապված տարաձայնությունները, ինչպես նաև Ծառայությունների մատուցման դադարեցման դեպքում չկարգավորված ֆինանսական և այլ հարցերը լուծվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ մեկամսյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերն իրավասու են դիմելու դատական պաշտպանության:

13.2. Պայմանագիրը և դրանով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ նյութական և դատավարական իրավունքի նորմերով: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Պայմանագրից ծագած վեճերը ենթակա են քննության Կատարողի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանում՝ անկախ Կատարողի կարգավիճակից:

14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Կատարողի կողմից հայտարարված ակցիաները, զեղչերը և այլն, տվյալ փաստաթղթում սահմանված ժամանակահատվածում կհանդիսանան Բաժանորդագրության պայմանագրի լրացում և դրա անբաժանելի մաս: Դրանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կատարողի պաշտոնական վեբ կայքում և/կամ հասանելի է դարձվում Բաժանորդներին Զանգերի, SMS ծանուցումների և/կամ Բաժանորդներին հասանելի այլ եղանակներով:

14.2. Կատարողն իրավասու է Բաժանորդագրության պայմանագրով ամրագրված իր իրավունքներն ու պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել, զիջել այլ անձի՝ առանց Բաժանորդի նախնական համաձայնության:

14.3. Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և համապատասխան մասով փոխարինում են մինչև սույնի ուժի մեջ մտնելու պահը Կատարողի և առկա Բաժանորդների միջև փաստացի գործող պայմանագրային հարաբերությունների ընդհանուր պայմաններին: Վերջիններս համարվում են ամբողջովին փոխարինված սույն հրապարակային առաջարկի/օֆերտայի պայմաններով: Սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Սակագնային պլանները/փաթեթները և Ծառայությունների մատուցման այլ պայմաններն ու կանոնները մնում են ուժի մեջ:

15. ԿԱՏԱՐՈՂԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կատարող	«Ռեալ Թայմ» ՍՊԸ
Հասցե՝	ք.Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝	02229634
Հ/Հ՝	«Ինեկոբանկ» ՓԲԸ, 2050022059901001
Տնօրեն՝	Վ.Լալայան